ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԳԵՈԴԵԶԻԱՅԻ, ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ, ԵՐԿՐԻ ՀԵՌԱՀԱՐ ԶՈՆԴԱՎՈՐՄԱՆ, ՀՈՂԱՅԻՆ ԿԱԴԱՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՈՒ ՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 6 մարտի 2007թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Հ. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Վ. Հովհաննիսյանի, Զ. Ղուկասյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ռ. Պապայանի, Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Մ. Վարդանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետի, 101 հոդվածի 1 կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի հոկտեմբերի 23-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բելառուսի Հանրապետության կառավարության միջեւ գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման, հողային կադաստրի ստեղծման ու վարման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի զեկուցագիրը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունները, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2006 թվականի հոկտեմբերի 23-ին՝ Երեւանում եւ նպատակաուղղված է երկու երկրների միջեւ գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման եւ հողային ռեսուրսների կառավարման ոլորտներում համագործակցության ամրապնդմանը:

Համաձայնագրով Կողմերն ստանձնել են համաձայնագրի 1-ին հոդվածում շարադրված մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝ գիտատեխնիկական եւ արտադրական տեղեկատվության փոխանակում, համատեղ գիտահետազոտական, փորձարարական եւ արտադրական աշխատանքների իրականացում, Կողմերի համար անհրաժեշտ՝ համատեղ աերոտիեզերական նկարահանումների կատարում եւ Երկրի հեռահար զոնդավորման տվյալների փոխանակում, գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման եւ հողային կադաստրի ստեղծման ու վարման աշխատանքների կատարման համար կադրերի պատրաստում ու որակավորման բարձրացում եւ այլն:

2. Համաձայն համաձայնագրի 2 հոդվածի՝ Կողմերը համագործակցություն կիրականացնեն հետեւյալ ձեւերով.

- սույն համաձայնագրի 1-ին հոդվածում նշված ուղղություններով համատեղ ծրագրերի եւ նախագծերի մշակում եւ իրագործում,

- խորհրդակցությունների, համաժողովների, գիտաժողովների, սեմինարների եւ խորհրդատվությունների անցկացում,

- համատեղ զեկույցների, հոդվածների եւ մենագրությունների հրապարակում,

- օրենսդրական եւ այլ նորմատիվ իրավական ակտերի, մեթոդական, գիտատեխնիկական գրականության փոխանակում գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման, հողային կադաստրի ստեղծման ու վարման ոլորտում եւ այլն:

3. Համաձայնագրի իրագործմանն ուղղված գործունեությունը համակարգելու նպատակով Կողմերն ստեղծում են գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման եւ հողային կադաստրի ստեղծման ու վարման բնագավառում համագործակցության հայ-բելառուսական համատեղ հանձնաժողով:

4. Կողմերը նշանակում են սույն համաձայնագրի իրագործման համար պատասխանատու իրավասու պետական մարմիններ՝ Հայկական կողմից՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

5. Համաձայնագրի շրջանակներում իրականացվող համատեղ գործունեության ընթացքում ստացված արդյունքները հրապարակման ենթակա չեն եւ չեն կարող փոխանցվել կամ վաճառվել երրորդ պետությունների իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, եթե Կողմերի միջեւ չկա այլ պայմանավորվածություն:

6. Համաձայնագրում նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած բոլոր պարտավորությունները փոխադարձ են եւ համահունչ այլ պետությունների հետ հարաբերությունների փոխշահավետության սկզբունքին, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 9 հոդվածում:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2 կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2006 թվականի հոկտեմբերի 23-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Բելառուսի Հանրապետության կառավարության միջեւ գեոդեզիայի, քարտեզագրման, Երկրի հեռահար զոնդավորման, հողային կադաստրի ստեղծման ու վարման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

6 մարտի 2007 թվականի
ՍԴՈ-680